# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-2021/01** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով դիզելային վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը տեղի է ունեցել

17.09.2021թ. ժամը 17:00

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Սուսաննա Թադևոսյանը

**Անդամներ՝** Նարինե Սուլխյանը

Հռիփսիմե Նազարեթյանը

**Հանձնաժողովի քարտուղար՝** Անժելա Ավագյանը

**1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Ընդունել ի գիտություն, որ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության /ՀԿ/ կարիքների համար **դիզելային վառելիքի** /ապրանք/ ձեռքբերման նպատակով ս.թ. սեպտեմբերի 13-ին հայտարարվել է **ՀԿՀԿ-ԳՀԱՊՁԲ-2021/01** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտը պարունակող ծրարը բացվել է ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա շին. 7 հասցեում /2-րդ հարկ/ ս.թ. սեպտեմբերի 17-ին, ժամը 17.00-ին:

**Հանձնաժողովը արձանագրեց.**

**2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները**

| N | Մասնակցի անվանումը | գործունեության հասցեն<br>էլ. փոստի հասցեն | հեռախոսա-համար | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆլեշ ՍՊԸ | ք. Երևան Ն. Կողբացու 30<br>flashltdtender@mail.ru | +37410534233 | 01808789 |

**3. ա. Հայտը պարունակող ծրարը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին**

- Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների համապատասխան:

**բ. բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.**

- Մասնակցի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված բոլոր փաստաթղթերը առկա են, ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճենից:

**գ. Տվյալներ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

- Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

**4. Մասնակցի առաջարկած գինը**

**ՀՀ դրամ**

| Չ/հ | գնման առարկա | Նախահաշվային գումարը | մրցույթին մասնակցող կազմակերպության | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումը | գնային առաջարկ | | |
| | | | | արժեք | ԱԱՀ | ընդհանուր գին |
| 1 | Դիզելային վառելիք | **1 350 000** | Ֆլեք ՍՊԸ | 1 175 000 | 235 000 | 1 410 000 |

**Ֆլեք ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնառաջարկը 1 չափաբաժնով գերազանցում է նախահաշվային գինը**

**5. Հանձնաժողովը որոշեց**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ նիստը կասեցնել 2 /երկու/ աշխատանքային օրով՝ մինչև **23.09.2021 ժամը 17.00-ն** ընտրված մասնակից որոշելու նպատակով՝ Ֆլեք ՍՊ ընկերությանը (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցչին) հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցության ՀՀ, ք. Երևան, Կորյունի 19ա շին. 7, /2-րդ հարկ/ հասցեով, հեռ. /099/755-104/: Բանակցությունը կարող է վարվել նաև էլեկտրոնային եղանակով, հետևյալ էլեկտրոնային հասցեներին ուղարկելու միջոցով /hangel@inbox.ru, narinebridgeofhope@gmail.com/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվել է 22.09.2021թ. ժամը 15:00, քանի որ մասնակցի կողմից սահմանված ժամկետից շուտ ներկայացվել է վերջնական դիրքորոշում /կցվում է/**

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝** Սուսաննա Թադևոսյան

**Անդամներ՝** Նարինե Սուսլիյան

Հռիփսիմե Նազարեթյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Անժելա Ավագյան

**6. Հանձնաժողովը արձանագրեց**

Գնի նվազեցման շուրջ բանակցությունների համար մինչև սահմանված վերջնաժամկետը լրանալը՝ Ֆլեք ՍՊ ընկերության կողմից 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի համար գնային առաջարկը մնացել է անփոփոխ և գինը գերազանցում է գնման հայտով սահմանված գինը:

**7. Հանձնաժողովը որոշեց**

7.1 Ֆլեշ ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակից ճանաչել **Ֆլեշ ՍՊ ընկերությանը՝ պայմանով, որ** վերջինիս հետ կնքվող պայմանագրով կնախատեսվի գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ անգործության ժամկետ չսահմանել և **Ֆլեշ ՍՊ ընկերության հետ** կնքել պայմանագիր, հաշվի առնելով սույն համաձայնագրի 7.1 կետը: Պայմանագրի նախագիծը կազմակերպել գրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

**Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝**

ա/ Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում;

բ/ Տեղեկագրում հրապարակում է նաև իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը;

գ/ Ծանուցում է ընտրված մասնակցին, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ պայմանագիրը կնքելու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

**Հանձնաժողովի նախագահ՝** Ա. Թադևոսյան

**անդամներ՝** Ն. Սուլիկյան

Հ. Նազարեթյան

**Քարտուղար՝** Ա. Ավագյան